Բորոդինայի գլխաւորութեամբ։ Գաղտնիք չէ, որ Խորհրդային իշխանութեան գործակալները հազար ու մի դաւեր են լարում պարսից կառավարութեան դէմ եւ մասնաւորապէս ջանում նրա դէմ լարել պարսկական քրդերին։

Այսօրինակ դիւանագիտական «գաղտնիքներ» շատ կան, որոնք այլեւս հանրութեան սեփականութիւն են կազմում եւ սրանց շնորհիւ բոլշեւիկները միջազգային յարաբերութիւնների մէջ ժանտախտի հոչակ են ստացել։

Բոլշեւիկներն իրենք էլ զգում են, որ այս որակման մէջ ճշմարտութեան մեծ տարր կայ. դրա համար էլ, չնայած իրենց հանրածանօթ յանդգնութեանը, այլեւս ձայն ու ծպտուն չեն հանում գաղտնի դիւանագիտութեան մասին։ Հոկտեմբերեան յեղաշրջման օրերի նշանաններից մի քանիսը նրանք, ի պահանջել հարկին, դեռ եւս երբեմն-երբեմն յիշատակում են. բայց այս մէկը՝ երբ՛ք։

Ըստ երեւոյթին, խօսքի եւ գործի հակասութիւնը մի սահման ունի, որից այն կողմը նա ամօթ է պատճառում նոյնիսկ բոլշեւիկին...

* * *

Արտաքին պարտքերի վերաբերեալ Հոկտեմբերեան նշանաբանը համեմատաբար նը-պաստաւոր վիճակ ունի բոլշեւիկների համար։ Այդ նշանաբանը նրանք դեռ եւս միաձայնութեամբ վարկաբեկուած, տապալուած չեն նը-կատում, ինչպէս նախորդները, այլ նրա շուրջը վիճում են իրար հետ։ Եւ, ինչպէս բոլշեւիկեան բոլոր վէճերի դէպքում, այս դէպքում եւս սուտն ու կեղծիքն անպակաս են։ —

Առաջին սուտն այն է, որ բոլշեւիկները պարտքերի խնդրում նահանջի ճանապարհ բանալու համար ասում են, թէ հոկտեմբերեան յեղաշրջման օրերին իրենք աշխատաւոր զանգուածների առաջ յանձնառու են եղել մերժելու միայն պատերազմի կարիքներին յատկացուած արտաքին պարտքերը, եւ ոչ թէ առհասարակ այն բոլոր պարտքերը, որ արուել են ցարական կառավարութեան օրօք։ Մինչդեռ ակնյայտնի իրողութիւն է, որ բոլշեւիկները այդ օրերին վճռականապէս մերժում էին առհասարակ ցարական կառավարութեան բոլոր պարտքերը եւ եթէ փոքր ինչ տատանւում էին՝ այդ էլ միմիայն հասարակական հաստատութիւնների կնքած փոխառութիւնների նկատմամբ էր։

Երկրորդ սուտն էլ այն է, որ նրանք հաւատացնում են, չգիտենք ո՛ւմ, թէ Խորհրդային իշխանութիւնը պարտքերի վճարման խնդրում իր սկզբունքից չէ հրաժարուել։ Այսպէս են պատասխանում ստալինականները ընդդիմադիրների այն մեղադրանքին, թէ օրուան դիկտատորները արտաքին պարտքերը ճանաչելու ուղին են թեւակոխել։ Իսկ որ այս պատասխանը սուտ է, այդ մասին կասկած չի կարող ունենալ նա, ով հետեւել է այն բանակցութիւններին, որ վարում էր Խորհրդային դեսպան Ռակովսկին Ֆրանսական կառավարութեան ներկայացուցիչների հետ։

Համաձայն այն յուշագրի, որ Ռակովսկին ներկայացրեց Ֆրանսական բանաձեւների նախագահ դը Մոնզիի-ին անցեալ սեպտեմբերին՝ բոլշեւիկները ընդունել են նախապատերազմական պարտքերը վճարելու սկզբունքը։ Սակայն որովհետեւ նրանք ի վիճակի չեն դրամ մէջտեղ հանելու՝ պարտաւորութիւն են ըստանձնում տարեկան 60 միլիոն ոսկի ֆրանկի վճարումով հանդցնել այդ պարտքերը։ Սրա համար նրանք խնդրում էին միայն 120 միլիոն տոլարի նոր փոխառութիւն, որը պէտք է գործադրուէր առաջին հինգ տարուան վճարումները կատարելու եւ Խորհրդային արդիւնաբերութեան համար Ֆրանսայում մեքենաներ կամ գործիքներ գնելու նպատակով։ Այս յուշագրին յաջորդած պաշտօնական գրագրութիւններից պարզւում է, որ պարտքերի վճարման եղանակի մասին կողմերի միջեւ կատարեալ համաձայնութիւն է կայացած եղել եւ խնդիրը մնացել է առկախ վիճակի մէջ միայն այն պատճառով, որ Ֆրանսացիք հրաժարւում էին 120 միլիոն տոլարի փոխառութիւն անել Խորհրդային իշխանութեանը։

Մեղ կարող են առարկել, թէ Ռակովսկիի առաջարկները ոչ այլ ինչ էին, բայց եթէ սովորական բոլշեւիկեան խաղեր, որոնց նպատակն էր հին պարտքերի վճարման խայծով նոր դրամ պոկել Ֆրանսայից, որպէսզի վերջինս չկարողանայ դիւրութեամբ խզել իր դիւանագիտական յարաբերութիւնները Խորհրդային իշխանութեան հետ, ինչպէս այդ արաւ,